ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 օգոստոսի 2016 թվականի N 68 _Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՌՈՒԴՈԼՖ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՀԱՄԱՐ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական և ծառայողական գաղտնիքի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ կետի ,,ա,, ենթակետով, <<Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1997թ. նոյեմբերի 5-ի N 487 որոշումը, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանում պետական և ծառայողական գաղտնիքի պաշտպանության, ինչպես նաև պետական և ծառայողական գաղտնիքի մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման ապահովումը վերապահել աշխատակազմի ղեկավար Ռուդոլֆ Սարգսյանին:
2. 1-ին կետով նախատեսված գործառույթների կատարման համար Ռ. Սարգսյանի համար սահմանել հետևյալ արտոնությունները.

1) աշխատակազմի աշխատավարձի ֆոնդի սահմաններում լրացուցիչ վարձատրություն (հավելում)՝ պաշտոնային դրույքի 15%-ի չափով.
2) վճարովի լրացուցիչ 5-օրյա արձակուրդ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2016թ.օգոստոսի 3
ք. Կապան